2021-2022ուստարի

Աբովյանի կրթահամալիր

Հաշվետվություն

4-րդ գ դասարանի աշակերտական կազմում 2-րդ կիսամյակի սկզբին եղել է 23 աշակերտ՝13 տղա,10 աղջիկ:Կիսամյակի վերջում դասարան է եկել մեկ աղջիկ / Մարիամը/: Արդյունքում՝ 24 աշակերտ՝ 11աղջիկ, 13 տղա: Դասարանում չկա «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող» սովորող :

Գերազանց՝1 /աղջիկ /

Հարվածային՝10 /6 տղա, 4 աղջիկ/

Միջակ՝ 13 /7տղա, 6աղջիկ/

Բացակայությունների թիվը տարվա կտրվածքով՝ 1329 ժամ:

Որակական առաջադիմությունը՝ 46 %

Ընդհանուր առաջադիմությունը՝ 100 %

Չգնահատված չկա

Կիսամյակի ընթացքում /նաև տարվա կտրվածքով/ իրականացվել են ուսպլանով նախատեսված առարկայական միջոցառումները: Կատարվել են բազմաթիվ նախագծային դասեր մայրենի, ինքնուրույն ընթերցանություն և Ես և շրջակա աշխարհը առարկաներից:

Իրականացվել են համակարգչային դասեր: Տեղի են ունեցել փոխադարձ դասալսումներ :

Դասղեկի ժամին իրականացվել են դաստիարակչական բնույթի տարբեր թեմատիկայով զրույներ,որոնք նպաստել են դասարանում ընկերասիրության,հանդուրժողականության, սովորողների արժեքային համակարգի ձևավորման ,հայրենասիրության դաստիարակմանը : Կազմակերպվել են ծնողական ժողովները: Յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվել են ծնողական հանդիպումներ և քննարկվել են ներքին կարգապահական,ինչպես նաև դաստիարակությանն ու ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր:

19. 02.2022թ. -Գրքի տոն / դաս միջոցառում/

13.04.2022թ.- Այցելություն Մատենադարան, Հովհ. Թումանյանի տիկնիկային թատրոն, «Չոփչոփիկը » ներկայացումը:

18.04.2022թ Քրիստոսի հարության՝ Սուրբ Զատիկ տոնը /դպրոցի ճաշարանում / :

01.06.2022թ. համադպրոցական միջոցառում նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

09.06.2022թ.«Մեր մանկության մոլորակը» խորագրով հրաժեշտի միջոցառում:

10.06.2022թ. և 13.062022թ.տեղի ունեցան Գիտելիքների ստուգում մայրենի և մաթեմատիկա առարկաներից:

Մայրենի՝ 10.06.2022թ.	Մաթեմատիկա՝13.06.2022թ.
«10» - 0	«10» - 3
«9» -7	«9»-5
«8» -7	«8»-3
«7»-4	«7» -4
«6» -2	«6» -5
«5»-3	«5» -3
«4»-1	«4»-1
Որակականը՝ 58 %	Որակականը՝ 45 %

Տարեկան դրական գնահատականներ ստացած սովորողները ունեն չափորոշչին համապատասխան գիտելիք,որը հաստատվեց «Գիտելիքների ստուգման» արդյունքներով:

Դասարանում տիրում է դրական, հոգեբանական մթնոլորտ: Սովորողները ակտիվ շփվում և համագործակցում են միմյանց հետ, օգնում ուսման մեջ ետ մնացողներին: Վերը նշվածին մասնավորապես նպաստել են դասղեկի ժամերին տարբեր թեմաներով իրականացված զրույցները:

Դասվար՝ / / Գ. Ավագյան /